

Դրանք շատ հաճախ Դավրիժեցին տարագում է «արգա» արաբերեն բառով, ընդ որում՝ մի տեղ պատմիչը հարկ է համարում բացատրել արաբերեն բառը («գիրս յօժարութեան՝ որ է արգայ» /էջ 255/), թեպետ դրանից առաջ բազմիցս կիրառում է առանց բացատրելու: Ներժանրային այդ կառույցը տիրապետող է հատկապես Մելքիսեթ կաթողիկոսի ու Շահ-Աբասի նամակագրության մեջ, որ վկայագրված է «Յաղագս հարիւր թուման մուղադային, զոր շահն եդ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին» վերնագրով ԺԸ գլխում ու, բնականաբար, դրանք հեղինակել է բացառապես հայոց կաթողիկոսը: Ընդ որում՝ դրանց մեծ մասը հատվածական է, իսկ շատ աղերսագրեր էլ ներբերված են անուղակի կերպով, այսինքն՝ պատմված է դրանց բովանդակությունը:

Մելքիսեթ կաթողիկոս – Շահ-Աբաս նամակագրությունը Դավրիժեցու պատմագրքում վկայագրվածներից ամենաարժանահավատն է, քանզի ընթացքում պատմիչի մի շատ կարևոր նշումից պարզվում է, որ նա անձամբ կարդացել է որոշ նամակներ և նույնիսկ այլ ձեռագրերի հետ համեմատելու հնարավորություն է ունեցել. «Բայց ի բուն մատեան արքունական դիւանի ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ որպէս որ էր ձեռագիր կաթուղիկոսին...» (էջ 196): Մելքիսեթ կաթողիկոսի և Շահ-Աբասի նամակագրությունը ուշարժան է նաև գաղափարական առումով: Այն բովանդակային, բառապաշարային, հոգեբանական վիճակի և շատ այլ կողմերով ընդհանրացված ներկայացնում է հայ և պարսիկ ժողովուրդների հարաբերությունների բնույթը տվյալ ժամանակաշրջանում:

Դավրիժեցու պատմագրքում թղթի ներժանրային կառույցներն ամբողջական ներկայացնելու առումով նշենք, որ նրանում առկա են նաև կաթողիկոսական **կոնդակներ**, հատկապես «Յաղագս հարիւր թուման մուղադային, զոր շահն եդ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին» վերնագրով ԺԸ գլխում: Կոնդակները, ինչպես և հրովարտակները, ունեն հրապարակային բնույթ: Դրանց հետ առնչվում են կաթողիկոսների անվան հետ կապվող թղթերի